Այս ուղեցույցը կազմվել է Քյորբեր հիմնադրամի կողմից՝ որպես աջակցություն «Պատմության մրցույթների» մասնակից աշակերտների / երիտասարդների համար: Այս ուղեցույցը կարող եք կիրառել՝ քննարկելով ձեր թիմի և ուսուցչի հետ:

Ինչպե՞ս գրել լավ հետազոտական աշխատանք

Մեկնարկ

Իմի բերեք ձեր տպավորությունները. մտագրոհ

Որո՞նք են թեմայի հետ ձեր անմիջական կապերը: Զննե՛ք ձեր շրջապատը: Դիտարկե՛ք, օրինակ՝

- Թերթերի հոդվածներ և գրքեր, ֆիլմեր և հեռուստատեսային վավերագրական ֆիլմեր,
- Փողոցները, վայրերը, հուշարձանները կամ տոները, որոնք վերաբերում են պատմության կոնկրետ ժամանակահատվածին
- Ընտանեկան լուսանկարներ, օրագրեր և նամակներ. դրանք կարող են հետաքրքիր գաղափարների աղբյուր հանդիսանալ
- Զրուցե՛ք այլ մարդկանց՝ համադասարանցիների, ձեր տատիկների և պապիկների հետ. նրանք կարող են ձեզ գաղափարներ հուշել: Ավելին, լսելիս կարող եք հասկանալ, թե ո՞ր թեման է ձեզ իսկապես հետաքրքրում: Ձեր առաջին մտքերը գրի՛ առեք և պահպանե՛ք:

Գրքերի ընթեցանություն. գրադարաններ

Գնացե՛ք հանրային (կամ դպրոցի) գրադարաններ և ուսումնասիրե՛ք

- Տեղական տարեգրությունները
- Տեղական և տարածաշրջանային պատմությանը առնչվող գրքերը: Ընթերցելիս գրառումներ կատարե՛ք:

Որոշման կայացում

Կա՛նգ առեք մեկ թեմայի վրա և որոշե՛ք՝ արդյո՞ք կկարողանաք կատարել այդ աշխատանքը սահմանված ժամկետում.

- Արդյո՞ք տեղեկատվության բավական առաջնային աղբյուր ունեք և հասանելի՞ են դրանք ձեզ, թե՞ ոչ:
- Կարո՞ղ եք հստակ ուրվագծել թեման, որպեսզի կարողանաք կենտրոնանալ դրա առանձին կողմերի վրա և «չխեղդվել» նյութերի կույտի տակ:

Առաջնային աղբյուրների փնտրտուք. արխիվ

Ձեր թեմայի վերաբերյալ տեղեկատվություն գտնելու համար կապ հաստատե՛ք ձեր մոտակայքում գտնվող տեղական կամ տարածաշրջանային արխիվների հետ՝ ուսումնասիրելու փաստաթղթեր, հին թերթեր կամ քարտեզներ:

Առաջնային աղբյուրների փնտրտուք. հարցազրույց կենդանի ականատեսների հետ

Դուք պետք է ոչ միայն ուսումնասիրեք գրականությունն ու փաստաթղթերը, այլ նաև խոսեք այն մարդկանց հետ, ովքեր վերապրել են պատմության այդ ժամանակաշրջանը:

Կազմե՛ք (ժամանակային) պլան

Ձեր հետազոտական աշխատանքի կազմակերպումը շատ կարևոր է: Այդ պատճառով էլ շատ օգտակար է պլանի կազմումը.

- Ո՞ր տեղեկատվությունն է վերաբերում ձեր թեմային, ի՞նչ տեղեկատվություն արդեն ունեք, ի՞նչն է դեռևս պակասում:
- Ովքե՞ր են ձեր թիմում ներառված մյուս հետազոտողները:
- Որքա՞ն ժամանակ կարող եք տրամադրել ձեր հետազոտական աշխատանքին՝ թեմայի փնտրտուքից մինչև արդյունքների ներկայացում:

Թեմայի նկարագրություն

Դուք գտել եք թեմա, ստեղծել ժամանակացույց, հավաքագրել նախնական տեղեկատվություն, սակայն ինչպե՞ս շարունակել աշխատանքը:

Ամենաշատը, ինչի կարիքն ունեք այս փուլում, **լավ հարցն** է: Որոշե՛ք, թե ինչ եք ուզում հայտնաբերել ձեր ուսումնասիրության արդյունքում:

Կառուցե՛ք ձեր պատմությունը

Դուք գտել եք ձեր հարցերի պատասխանները և հավաքագրել եք պատմական տեղեկատվություն: Այժմ կարևոր է իմի բերել կատարված աշխատանքը, ուրվագծել հիմնական կետերը և համակարգել նյութը՝ ըստ համապատասխան կառուցվածքի:

Դուք կարող եք ընտրել կառուցվածքի երկու տարբերակներից մեկը. ժամանակագրական կառուցվածք կամ համակարգային կառուցվածք:

Ժամանակագրական կառուցվածք.

Դուք կարող եք, օրինակ, նկարագրել որևէ կազմակերպության պատմությունը 1920 թվականից սկսած մինչև մեր օրերը՝ հիմնված ձեր երկրի ընդհանուր պատմության վրա: Հնարավոր է նաև շեշտադրել կազմակերպության մեջ տեղի ունեցած արմատական փոփոխությունները՝ որպես ժամանակագրության հիմնական կետեր: Սակայն, շատ կարևոր է շեշտադրել գլուխների բովանդակությունը: Օրինակ՝ «1945» ենթավերնագիրը ոչինչ չի ասում. հարկավոր է որևէ տեղեկություն ավելացնել, որը կհուշի բովանդակության մասին:

Համակարգային կառուցվածք.

Համակարգային դասավորվածությունը խնդիրները վեր հանելու լավագույն մեթոդն է: Օրինակ, եթե դուք գրում եք «մեր քաղաքում կենդանիների ապաստարանների հիմնադրման մասին», կարող եք մի գլխում նկարագրել սեփականատերերի գործառույթների մասին, մեկ այլ գլխում մանրամասն խոսել «հաճախորդների», իշխանությունների, կենդանիների, և այլնի մասին: Այսպես դուք ցույց եք տալիս, որ խնդիրն ուսումնասիրել եք տարբեր դիտանկյուններից:

Ինչո՞ւ է այդպես պատահել: Բացատրե՛ք, թե ինչ եք հայտնաբերել:

Դրսևորե՛ք քննադատական մտածողություն:

Անցյալի մասին առաջնային աղբյուրները չեն կարող «չեզոք» կերպով ներկայացնել այն, ինչ «իրականում տեղի է ունեցել»: Առաջնային աղբյուրները քիչ թե շատ տեսանելի, սուբյեկտիվ տեղեկություններ են հաղորդում դեպքերի մասին, այդ պատճառով էլ դուք պետք է լինեք ուշադիր և քննադատաբար մոտենալ նյութերին.

- Գրավոր աղբյուրներ. ուսումնասիրեք դրանց ծագումը, նախապատմությունը, ինչպես նաև նպատակն ու գաղափարական միտումները:
- Ականատեսների վկայություններ. նրանք կարող են որոշ բաներ մոռացած լինել կամ հստակ պատկերացում չունենալ իրադարձությունների մասին:

Հավաքագրե՛ք տարբեր կարծիքներ։

Ինչքան մարդ, այնքան կարծիք։ Փնտրե՛ք երկրորդ աղբյուր, որը այլ տեսանկյունից է դիտարկում թեման։

Ի՞նչ է այս ամենը նշանակում։

Դուք նկարագրել և քննադատաբար ուսումնասիրել եք փաստերը և աղբյուրները։ Այժմ գլխավոր հարցը տալու ժամանակն է. ո՞րն է յուրաքանչյուր աղբյուրի կարևորությունը և ամբողջ ուսումնասիրության եզրակացությունը։

Մեծաքանակ կարծիքներ տարբեր դիտանկյուններից, և դուք անցել եք ճանապարհի կեսը։

- Դիտարկեք՛ և բացատրե՛ք, թե ինչո՞ւ է մի աղբյուրը մյուսից տարբեր դատում իրավիճակի մասին։ Ո՞ր մոտեցումն է ավելի իրատեսական։
- Նշե՛ք, թե ձեր կարծիքով ինչն է այս կամ այն մոտեցման օգտին խոսում։ Եթե գտել եք որևէ հակասություն, որի բացատրությունը չունեք, նշե՛ք այդ մասին։

Գնահատե՛ք ձեր արդյունքները։

Դուք հայտնաբերել եք ձեր թեմայի պատմական հետքերը, քննադատորեն նկարագրել եք այն և տվել բացատրություններ։ Այժմ դեռևս պակասում է գնահատումը։ Սովորաբար դուք պետք է ինքներդ ձեզ հետևյալ հարցերը տաք.

- Որո՞նք են ձեր կողմից ուսումնասիրված պատմության դրական և բացասական կողմերը։
- Արդյո՞ք ձեր ուսումնասիրած օրինակը որևէ հետևանք ունեցել է կամ փոխել է որևէ բան։
- Արդյո՞ք ձեր ուսումնասիրության արդյունքները որևէ նշանակություն ունեն այսօրվա համար։
- Ի՞նչն էր ձեզ համար ամենազարմանալին և ուշագրավը։

Ներկայացրե՛ք ձեր արդյունքները։

Ուսումնասիրության հիմնական կարևորությունը, անշուշտ, տեղեկատվության հավաքագրումն է և դրա վերլուծությունն ու գնահատումը։ Սակայն արդյունքը պետք է ներկայացվի գրավիչ ձևով։ Հիշե՛ք ընտրել այնպիսի միջոց, որը համապատասխանում է մրցույթի չափանիշներին։

Արդյունքները կարող եք ներկայացնել տարբեր եղանակներով.

- շարադրություն, հոդված, էսսեյ
- վիդեո պատմություն
- ֆոտո պատմություն / ցուցահանդես
- փոդքասթ
- սահիկահանդես

- պոստեր
- դերախաղ / ներկայացում
- պատմական վայրերով շրջայց
- խաղ կամ խճանկար

Եթե որոշել եք կիրառել արդյունքների ներկայացման այլընտրանքային միջոցներ, մի՛ մոռացեք գրել նկարագրություն՝ մանրամասն բացատրելով, թե ինչ պատմական բացահայտումների վրա է հիմնված ձեր ուսումնասիրությունը։